ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

ք. Հրազդան 10.12.2021թ. ժամը 11^{00}

ՀՀ Կոտայքի մարզպետարանի կարիքների համար <<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/1Ա> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

Հանձնաժողովի նախագահ՝

Ստեփան Բաղդասարյան- Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի օգնական

Անդամներ՝

Ալեքսան Եղիշյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ

Կարեն Հունանյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Վահագն Նազլոյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ

Հանձնաժողովի քարտուղար՝

Հասմիկ Հակոբյան-Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի քարտուղարության պետ

Նիստին ներկա չէր հանձնաժողովի անդամ Կ.Հովհաննիսյանը:

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Բանակցությունների մասին

<<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/1Ա>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 29.11.2021թ. թիվ 2 որոշմամբ՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի և հրավերի 1-ին մասի 8.7 կետի բ. ենթակետի համաձայն կասեցվել է նիստը և հայտերով ներկայացված գների նվազեցման նպատակով բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակիցները հրավիրվել են գների նվազեցման շուրջ բանակցություններ սույն թվականի դեկտեմբերի 10-ին, ժամը 11^{00}ին, Կոտայքի մարզպետարանում՝ ք.Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք հասցեում: Մասնակիցները ծանուցվել են նաև այն մասին, որ նոր գնային առաջարկներ կարող են ուղարկել նաև *kotayq.gnumner@mail.ru* էլեկտրոնային հասցեին մինչև դեկտեմբերի 10-ը, ժամը 11^{15}-ը:

Բանակցություններին ներկայացել են <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ լիազոր անձինք Վարդան Աբրահամյանը և Հրաչիկ Դավթյանը: <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ ներկայացրել է նոր գնային առաջարկ: Մյուս մասնակիցների կողմից էլեկտրոնային տարբերակով նույնպես նոր գնային առաջարկներ չեն ներկայացվել:

Մասնակիցների ներկայացրած վերջնական գնային առաջարկները.

ՀՀ դրամ

Հ/հ	Մասնակցի անվանումը	Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը)	ԱԱՀ	Ընդհանուր գինը
1	<<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ	8375000	1675000	10050000
	<<Գլոբ Աուդիտ>> ՍՊԸ	8400000	1680000	10080000
	<<Քրոու ընդ Ասատրյանս>> ՍՊԸ	14000000	2800000	16800000

2. <<ԿՈՏ-ԳՀԾՁԲ-2022/1Ա>> ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովն որոշեց.

2.1 Ճանաչել ընտրված մասնակից <<Բի-Դի-Օ Արմենիա>> ՓԲԸ-ին:

2.2 Ծանուցել ընտրված մասնակցին աշխատանքային ռեսուրսների առկայությունը հիմնավորելու համար ներկայացնել համապատասխան գործատուի կողմից ստորագրված երաշխավորության մասին ստորագրված գրավոր հավաստիացում և հայտարարություն՝ «Ներքին աուդիտի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված սահմանափակումների բացակայության մասին:

2.3 Կիրառել անգործության ժամկետ. "Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետը սույն ընթացակարգի դեպքում «5» օրացուցային օր է:

2.4 Անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում ծանուցել ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը՝ առաջարկելով 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրել պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնել որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ ---------- ***Ս.Բաղդասարյան***

անդամներ՝

---------- ***Ա.Եղիշյան***

---------- ***Կ.Հունանյան***

---------- ***Վ.Նազլոյան***

քարտուղար՝ ---------- ***Հ.Հակոբյան***